

**ԴԱՎԻԹ ՄԱՆՈՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ՀԱՏՈՒՎ
ARMENIAN-SOCCER.COM ԿԱՅՔԻ ՀԱՄԱՐ:**

Բոլոր թերթերը, ինտերնետ-կայքերը, ամսագրերը կարող են օգտագործել այս նյութը՝ նշելով բնօրինակը – www.armenian-soccer.com: Իրավունք չկա օգտագործելու այս նյութը վաճառքի կամ այլ մարքետինգային նպատակներով:

Ընթացիկ ԵՎԸՈ-12 ընտրական փուլում մեր թիմից սպասելիքները մեծ էին: Ինչո՞ւ էր, ըստ քեզ, պայմանավորված հերթական անհաջող մեկնարկը:

Կարող եմ ասել, որ անհաջող էր միայն արդյունքը, այլ ոչ թե թիմի խաղը: Պետք չէ մոռանալ, որ հենց առաջին խաղում մրցում էինք շատ ուժեղ հավաքականի հետ, իսկ այդպիսի թիմի դեմ լավ խաղն արդեն իսկ լավ նախադրյալ է հաջողությունների համար: Ինչ վերաբերում է Մակեդոնիայի հետ խաղին, ապա այն ուղղակի անհաջողություն էր, ֆուտբոլում նման բաներ պատահում են:

Ինչպե՞ս ես գնահատում քո խաղը այդ 2 հանդիպումներում:

Այն ամենն, ինչին ունակ էի, չկարողացա լիարժեք ցույց տալ այդ հանդիպումներում: Իրլանդացիների դեմ քիչ խաղացի ու չեմ կարող որեւէ գնահատական տալ իմ խաղին: Իսկ Մակեդոնիայում երեւի առաջին խաղակեսն այնքան էլ հաջող չստացվեց, բայց երկրորդում արդեն ինձ վստահ էի զգում ու իմ խաղն էի խաղում:

Հոկտեմբերին հավաքականը 2 շատ կարեւոր խաղ է անցկացնելու: Երեւանում Սլովակիայի եւ Անդորրայի թիմերի հետ: Ինչպե՞ս ես նախապատրաստվում այդ հանդիպումներին:

Շատ դժվար է պատրաստվել նման խաղերի՝ հանդես գալով մեր ներքին առաջնությունում, բայց ամեն դեպքում փորձում եմ առավելագույնս անել՝ այդ խաղերից առաջ լավ մարզավիճակում գտնվելու համար: Այդ առումով շատ լավ է, որ հոկտեմբերի 2-ին «Միկայի» հետ հանդիպում ունենք:

Առհասարակ ինչպե՞ս կմեկնաբանես մեր հավաքականի շանսերը ԵՎԸՈ-12ի ընտրական փուլում: Ո՞ր հորիզոնականի համար է մեր թիմն ի գորու պայքարել:

Աղյուսակում կոնկրետ հորիզոնական նշել չեմ կարող, եւ մենք մեր առջեւ այդպիսի խնդիր չենք դրել: Ուղղակի ամեն խաղում փորձելու ենք 3 միավոր վաստակել: Մենք ի գորու ենք պայքարել ամենաբարձր տեղերի համար:

Դու արդեն դարձել ես «Փյունիկի» առաջատարների մեկը եւ մեր ազգային թիմի հիմնական կազմի խաղացող: Ի՞նչ ես կարծում՝ ժամանակը չէ հետագա առաջընթացի համար ավելի ուժեղ առաջնություն տեղափոխվելու մասին մտածել:

Այո, իսկապես ժամանակն է: Տեսնենք՝ ինչպես կստացվի:

Իսկ որոնք են քո նախընտրած առաջնությունն ու ակումբը:

Անկեղծ ասած, անգամ մոտավոր չեմ կարող նշել առաջնությունն, ու առավել ես՝ ակումբը:

Ո՞ր մարզչի (ոչ Հայաստանից) աշխատանքն է քեզ դուր գալիս:

Արսեն Վենգերի: Միշտ երիտասարդ ֆուտբոլիստներով իր թիմը գեղեցիկ ու արդյունավետ ֆուտբոլ է խաղում:

Պու ունե՞ս ֆուտբոլային գործակալ, ո՞վ է զբաղվում քո հարցերով:

Իմ հարցերով զբաղվում է իմ գործակալը:

Ե՞րբ է ավարտվում պայմանագիրդ «Փյունիկի» հետ Ի՞նչ ես կարծում, կարո՞ղ ես շարունակել կարիերան հայկական որեւէ այլ թիմում:

Պայմանագիրս ավարտվում է 2012թ-ին: Բայց չեմ կարծում, որ հայկական որեւէ այլ թիմում կշարունակեմ ելույթներս:

Հայկական ո՞ր թիմի խաղառճը, կամ, այսպես ասած՝ թիմային ձեռագիրն է քեզ դուր գալիս:

Միայն «Փյունիկիին»:

Այս տարի չեմպիոնության համար «Փյունիկը» մրցակցում է «Բանանցի» եւ «Ուլիսի» հետ: Ըստ քեզ՝ այդ 2 թիմերի խաղամակարդակն է բարձրացե՞լ, թե՞ «Փյունիկինն» է ընկել:

2 թիմերի խաղամակարդակն էլ բարձրացել է, բայց դա չի նշանակում, թե «Փյունիկինն» ընկել է: Ուղղակի մի քանի անհաջող խաղ անցկացրեցինք ու դրա հետեւանքով կորցրեցինք առաջատարի մեր դիրքը:

Ի՞նչ է պետք անել, որ մեր առաջնության խաղերին ավելի շատ երկրպագուներ ներկա լինեն:

Նայելով այս տարվա «Փյունիկ»-«Բանանց» հանդիպումները, կարելի է այս հարցի պատասխանը գտնել: Պետք է լավ խաղալ, ցուցադրել արագ ու դիտարժան ֆուտբոլ: Բայց անել պետք է, որ մեր մյուս ակումբներն էլ նման կերպ խաղան: Շատ կարելու է նաև ֆինանսական աջակցությունը մեր մյուս ակումբներին: Առանց դրա հիմա անհնար է լավ ակումբ ունենալ:

Ի՞նչպես է «Փյունիկում» կազմված մարզումնային գործընթացը: Ազատ ժամանակ ունենո՞ւմ ես: Ինչո՞վ ես նախընտրում զբաղվել:

Շաբաթը գրեթե 7 օր պարապմունքներ ունենք: Եթե ազատ ժամանակ եմ ունենում, ապա հանդիպում եմ ընկերներին հետ, փորձում եմ հանգստանալ, լիցքաթափվել, կամ պարզապես

մնում եմ տանն ու որեւէ զբաղմունք ինձ համար գտնում:

Ըստ քեզ, որ թիմն է Աբու-Դաբիում կայանալիք աշխարհի ակումբային առաջնության գլխավոր ֆավորիտը:

Ֆավորիտ եմ համարում «Ինտերին»: Եվրոպական թիմերը միշտ էլ ֆավորիտ են եղել այս առաջնություններում:

Դավիթ, ինտերնետից օգտվո՞ւմ ես:

Այո՛:

Իսկ ի՞նչ երաժշտական նախասիրություններ ունես:

Հիմնականում «սեւականների» երգերն եմ լսում: Սիրում եմ ռոք, R&B. երբեմն էլ դասական երաժշտություն:

Ի՞նչն է դրդել քեզ՝ ֆուտբոլիստ դառնալու:

Ես ինքս դա չեմ որոշել: Իմ կարծիքով դժվար է ինչ-որ բան որոշել, երբ ընդամենը 5 տարեկան ես: Հայրս ինձ տարավ ֆուտբոլ պարապելու, իսկ հետ արդեն ես սիրեցի ու առանց ֆուտբոլի չէի կարող:

Ի՞նչ լեզուների ես տիրապետում:

Հայերենի, անգլերենի եւ ռուսերենի: Հիմա նաեւ իսպաներեն եմ սովորում:

Ո՞րն է ամենահիշարժան գոլդ: Ու նաեւ՝ ամենակարեւորը:

Երեւի թե Էստոնիային խփած գոլս, երբ հաշիվը 1-1 էր: Ինչպէս նաեւ՝ գավաթի եզրափակչում 0-0 հաշվի ժամանակ «Բանանցին» խփած գնդակս: